# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ն ԱՊՐԻԼԻ 7-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 31-Ը ԸՆԴՈՒՆԵԼ Է՝

**07.04.**—ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանին, որին ուղեկցում էին պետնախարարներ Ռ. Բագոյանը, Ա. Ղազարյանը, փոխվարչապետ Գ. Մարտիրոսյանը, կառավարության գործերի կառավարիչ Ս. Մանասերյանը, ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի վարչության ղեկավար Լ. Սուջյանը,

**08.04.**—Հռոմի Պապի պատվիրակ, Սրբազան Քահանայապետի ներկայացուցիչ, հավատի և կրոնի գրասենյակի վարիչ կարդինալ Քասիդիին, Մինսկի և Բելոռուսի մետրոպոլիտ Ֆիլարետին,

**10.04.**—Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը՝ Նիա Սոբհանիի գլխավորությամբ,
Վիրահայոց պատվիրակներին՝ թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի գլխավորությամբ,
Հնդկաստանի Մալաբար Եկեղեցու ներկայացուցիչ Ն. Ս. Բազիլիաս Մառտոմնային,
Ղպտիների Պատրիարք Շընուդային,

**11.04.**—ՀՀ ԳՀ նախագահ Բ. Արարքցյանին, Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանին և Ուկրաինայի պատվիրակներին,

**12.04.**—Ամերիկյան համալսարանի ներկայացուցիչներին՝ ՀԱՀ նախագահ, դոկտոր Միհրան Աղբաբյանի գլխավորությամբ,
ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ռոնովին,

**17.04.**—ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին, մշակույթի նախարար Հակոբ Մովսեսին, հեռուստառադիոպետվարչության նախագահ Տիգրան Հակոբյանին, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանին,
Վենետիկի և Վիեննայի միաբանություններից Մխիթարյան Հայրերին,

**19.04**—ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Գիլմորին,
ՀՀ նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանին,

**20.04.**—«Արաքս» գործակալության աշխատակիցներին,
ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանց դը Հարթինգին,

**24.04.**—ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանին, ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովին, Պետդումայի անդամ Զատուլինին,

**25.04.**—ԱՄՆ եկեղեցական խորհրդի պատվիրակությանը՝ խորհրդի նախագահ Մելվին Թալբերթի գլխավորությամբ,

**26.04.**—Ռումինիայի արտգործնախարար Թեոդոր Մելշքանուին,

**29.04.**—ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին և «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանին,

**30.04.**—«Բրաբիոն»—խաղաղության ծաղիկ» փառատոնի մասնակիցներին,

**02.05**—Միջազգային կարմիր խաչի տնօրեն Էրվին Բյոեին,

**09.05.**—ՀՀ-ում Գերմանիայի ժամանակավոր հավատարմատար Նորբերտ Հայնցեին և Վիեննայում Գերմանիայի ԵԱՀԿ-ի գծով հավատարմատար դոկ. Գյունտեր Թարցին,
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանին և Միջազգային բանկի ներկայացուցիչներին,

**11.05.**—Երքաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանին և Երքաղխորհրդի այլ աշխատակիցների,

**16.05.**—Մեթոդիստական Եկեղեցու ներկայացուցիչ Զարլզ Դեվիսին,

**24.05.**—Գերմանիայի Էկոնոմիկայի նախարար Կառլ Դիտեր Շպրայնգերին,

**26.05.**—Հայաստան-Սփյուռք համակարգչային հեռակամուրջի մասնակիցներին՝ հեռակամուրջի կազմակերպիչ, «Առագաստ» ընկերության փոխնախագահ Գարեգին Զուգասզյանի ղեկավարությամբ:

## ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երեկ, մայիսի 17-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Ասորական Արևելյան Եկեղեցու պետի՝ Մարտինքա Պատրիարքի ներկայացուցիչ, Իրաքի արքեպիսկոպոս Գավարկիս Սլևային՝ ընկերակցությամբ Մոսկվայի ասորիների հոգևոր հովիվ Տեր Խամիս Յուսեֆ քահանայի և Հայաստանում ասորական համայնքի նախագահ Բավել Թամրազովի: Սրբազան Հայրը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Մատինքա Պատրիարքի եղբայրական ողջույնները և շնորհավորանքները՝ Նորին Սրբության ընտրության և գահակալության առթիվ:

Քննարկվեց երկու Եկեղեցիների միջև փոխհարաբերության և գործակցության առավել սերտացման հարցը: Պատվիրակները իրենց հիացումը հայտնեցին մեր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռնարկումների և գործունեության մասին:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը և Ասորական Եկեղեցու ներկայացուցիչը նվերներ փոխանակեցին:

## ԿԱՆԱԴԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 12-ից մեկշաբաթյա այցով հանրապետությունում էր գտնվում Կանադայի պատվիրակությունը, որի կազմում էին Քվեբեկ նահանգի համալսարանի, թանգարանների, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանադայի գրասենյակի ներկայացուցիչները: Պատվիրակության նպատակն էր՝ մոտիկից ծանոթանալ Հայաստանի, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանային նմուշներին, քանի որ մոտ ապագայում ծրագրված է կազմակերպել մի ծավալուն ցուցահանդես, որտեղ կներկայացվեն հայ ազգային արվեստի թանգարանային բարձրարժեք գործեր: Կազմակերպական հարցերում նրանց գործուն աջակցություն կցուցաբերի կանադահայ համայնքը:

Հենց ժամանման օրը հյուրերը եղան Մայր Աթոռում, հանդիպեցին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին: Այնուհետև նրանք այցելեցին Գանձատուն և Մայր տաճարի թանգարան: Գրիգոր Խանջյանն ու արվեստաբան Մանյա Ղազարյանը մանրամասն տեղեկություններ հաղորդեցին այնտեղ պահվող ցուցանմուշների մասին:

Հաջորդ օրերին հյուրերը ծանոթացան հանրապետության ևս մի շարք թանգարանների: Կիրակի օրը ներկա գտնվեցին Մայր տաճարում մատուցվող Ս. Պատարագին:

## ԿԱՆԱԴԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Ռուսաստանի Դաշնությունում Կանադայի դեսպանատան ներկայացուցիչներ՝ նախարար-դեսպանորդ Ֆերը Դը Կերկով վան դեր Վարեն և հյուպատոսական գործերի վարիչ Լուիզ Կոտեն: Հյուրերին ընդունեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Շուրջ մեկ ժամ տևած զրույցի ընթացքում շոշափվեցին հայ-կանադական ընդհանուր հարաբերություններին, միջեկեղեցական համագործակցությանն առնչվող հարցեր: Մասնավորապես ընդգծվեց հայ ժողովրդի հոգևոր կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ունեցած կարևորագույն դերը:

## ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Երեկ, մայիսի 18-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Հրաչ Սիլվանյանին: Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեցին Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի և Համայն Ռուսիայի-Ուկրաինայի Պատրիարք Վլադիմիրի շնորհավորագրերը Նորին Սրբության գահակալության առթիվ:

Զրույցի ընթացքում շոշափվեցին Ուկրաինայի հայ համայնքի հետ համագործակցության և կապերի ամրապնդման, ինչպես նաև այդ խնդրում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությանն առնչվող հարցեր: Պարոն Հրաչ Սիլվանյանը ներկայացրեց Ուկրաինայի հայ համայնքի հոգսերն ու դժվարությունները, որ փորձում են հաղթահարել համատեղ ջանքերով: Մեր ժողովուրդը Ուկրաինայում իր կառուցողական գործունեության շնորհիվ հարգանք է վայելում, ասաց ՀՀ գործերի հավատարմատարը:

Զրույցի վերջում Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց Ուկրաինայի հայ համայնքին՝ վերատին շեշտելով, որ Մայր Աթոռը զորավիգ կկանգնի ազգանպաստ ձեռնարկներին: Մենք ժողովրդի հետ ենք լինելու և ոչ ժողովրդից հեռու, ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը:

* * *

Մայիսի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Մոսկվայի «Իմպերիալ» ֆիրմայի և Ռուս-Հայկական նախաձեռնությունների կենտրոնի նախագահ Արկադի Վարդանյանին: Պրն. Վարդանյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, ինչպես նաև իրենց պատրաստակամությունը հայտնեց հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանը նպաստելու գործին: Կենտրոնի միջոցներով հանրապետության տոցիալապես անապահով 400 ուսանողների, այդ թվում նաև Արցախից, տրվում է կրթաթոշակ: Կենտրոնը զորավիգ է կանգնում նաև այն օդաչուների ընտանիքներին, որոնք զոհվել են Արցախում: Սերտ կապ կա նաև Արցախի թեմի հետ: Կենտրոնը օգնում է Մոսկվայում ժամանակավորապես բնակվող մեր հայրենակիցներին. կազմակերպվում են դպրոցներ, իրականացվում է վիրավոր ազատամարտիկների բուժում: Կենտրոնի միջոցներով է տպագրվում «Արմյանսկի վեստնիկ» թերթը:

Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ասաց ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի գործունեության վերաբերյալ և շնորհակալություն հայտնեց հյուրերին ազգանպաստ ձեռնարկումների համար:

— Այս պետությունը դարձած է հայ ժողովրդի կամքը արտահայտող պետություն,—ասաց նա: — Ոչ ոք մեզ արժեք չի տա, եթե մենք մեզ չարժևորենք: Այս տունը մեր տունն է և հայկական յուրաքանչյուր կազմակերպություն պետք է նպաստի մեր հայրենիքի և պետության զորացմանը:

Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր տպավորությունները Արցախ կատարած այցելությունից՝ շեշտելով, որ պետք է քաջալերել հայերի վերադարձը հայրենիք, որի դեպքում մեր ձայնը առավել կզորանա: Զրույցի ընթացքում շոշափվեցին նաև տնտեսական նախաձեռնություններին և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը վերաբերող հարցեր: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ իր առաջին հայրապետական այցելությունը Հայաստանից դուրս կլինի Մոսկվա:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, «Իմպերիալ» ֆիրմայի տնօրեն Ավետիս Թութունջյանը, Հայ-Ռուսական համագործակցության և վերածննդի միության փոխնախագահ Համլետ Հակոբջանյանը, կոորդինացիոն խորհրդի անդամ Մուշեղ Փաշայանը, «Սնարք» գործակալության գլխավոր խմբագիր Ռեմ Անանիկյանը:

Վերջում Վեհափառ Հայրապետին ընծայվեց Ռուդոլֆ Խաչատրյանի արժեքավոր կտավներից մեկը, որը պատկերում էր Կոմիտաս վարդապետին:

* * *

Մայիսի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց մեքենաշինարարների 8-րդ միջազգային խորհրդակցության մասնակիցներին՝ ՀՀ արդյունաբերության նախարար Աշոտ Սաֆարյանի գլխավորությամբ: Տարբեր երկրներից ժամանած պատվիրակությունների ներկայացուցիչները ջերմորեն շնորհավորեցին Հայոց նորընտիր Հայրապետին, գահակալության առթիվ, և մաղթեցին երկար և արդյունաշատ գործունեություն:

Այժմ հոգևոր և տնտեսական գործունեության համադրման ժամանակն է, պատասխան խոսքում ասաց Վեհափառ Հայրապետը: Հայաստանը թևակոխել է զարգացման նոր ճանապարհ, այլևս մենք ենք, որ մեր կամքով պետք է ղեկավարենք մեր կյանքը: Գարեգին Ա Կաթողիկոսը բարձր գնահատեց մեքենաշինարարների համագործակցությունը տնտեսական խնդիրների լուծման ներկա փուլում: Մենք կարիքն ունենք ոչ թե խոսքով, այլ գործով հաստատվող աջակցության, ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ իրականացվող տնտեսական բարեփոխումների շնորհիվ բարեկամ հանրապետությունները միմյանց հետ սերտ համագործակցությամբ կհաղթահարեն առաջացած սոցիալական դժվարությունները:

Զրույցն անցավ աշխույժ, բարեկամական մթնոլորտում: Վերջում խորհրդակցության մասնակիցները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ հավատիացնելով, որ Ամենայն Հայոց Հովվապետի մաղթանքները զորավիգ կդառնան իրենց տնտեսական գործունեության մեջ:

## ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մայիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց Ռուսաստանում և Հայաստանում Հունգարիայի արտակարգ և լիազոր դեսպան պրն. Նանովկուն:

Զրույցի ընթացքում շոշափվեցին հայ-հունգարական հարաբերություններին վերաբերող հարցեր: Դեսպանը ցանկություն հայտնեց, որ հարմար առիթով Գարեգին Ա Կաթողիկոսն այցելի Հունգարիա, որով նոր փուլ կընկալվի հայ և հունգար միջեկեղեցական հարաբերություններում:

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՅՑԵԼԵՑ ԵՌԱԲԼՈՒՐ

Մայիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրավերով այցելեց Եռաբլուր՝ մասնակցելու Արծվաշենի պաշտպանության ժամանակ զոհված հայ ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի բացման արարողությանը:

Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան աղոթք կատարեց և օրհնեց հայ նահատակների հիշատակը:

Այս օրը, ասաց Նորին Սրբությունը, հայ արդի պատմության ամենից պայծառ պահերից մեկն է վերականգնում մեր հիշողության մեջ: 1918 թ. մայիսի 28-ին, 20-րդ դարում, առաջին անգամ հռչակվեց Հայաստանի անկախությունը, երկար դարերի ընդհատումից հետո: Սարդարապատի ճակատամարտը վճռական նշանակություն ունեցավ հայոց պատմության մեջ:

Այստեղ մենք միացնում ենք հիշատակը Սարդարապատի և ներկա Հայաստանի ու Արցախի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած քաջամարտիկների և աղոթք ենք ընծայում առ Աստված՝ վասն ապահովության և պաշտպանության հայրենյաց մերոց:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, «Էջմիածին» հանդեսի գլխավոր խմբագիր Աստղիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Ս. Էջմիածնի միաբանության այլ հոգևորականներ: